

1922 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԶՄԻՌՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԵՒ ՅՈՅՆԵՐԻ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷԱԲՆԱԿ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ՀՐԿԻՋՈՒՄԸ

ԹԵՀՄԻՆԷ ՄԱՐՏՈՅԵԱՆ (tehminemartoyan@gmail.com)

ՄՈՒՏՔ

Յօդուածի շրջանակում կատարուած հետազօտութիւնն ու եզրայանգումները փորձ են յստակեցնելու 1922 Սեպտեմբերին Զմիռնիայի հայերի եւ յոյների բնաջնջման, ապա թաղամասերի հրկիզման վերաբերեալ հակասական գնահատականները, ինչպէս նաեւ՝ հերքելու թուրքական ժխտողական պատմագրութեան շահարկող վարկածներից մէկը, թէ իբր հայերն ու յոյներն են հրկիզել քաղաքը:

Զմիռնիայում հայերի եւ յոյների բնաջնջման քաղաքականութեան, ապա՝ քաղաքի հրկիզման ուսումնասիրութեան համար առաւել հարուստ սկզբնաղբիւրային նշանակութիւն ունեցող անտիպ յուշագրութիւններից են ակադեմիկոս, քիզանդագէտ Հրաչ Բարթիկեանի *հօր՝ Զմիռնիայի վերապրող Միքայէլ Յակոբի Բարթիկեանի*¹, Հայ Ազգային Պատուիրակութեան դիւանատան տեղեկագիրը², Զմիռնիայի առաջն որդ Ղեւոնդ եպիսկոպոս Դուրեանի տեղեկագիրը³, տպագիր յուշագրութիւններից՝ լեզուաբան Դորա Սաքայեանի պապի՝ բժիշկ Կարապետ Խաչերեանի օրագիրը⁴:

Աղբիւրագիտական նշանակութեամբ ուսումնասիրութիւններից հարկ է առանձնացնել նաեւ Զմիռնիայում հաւատարմագրուած ԱՄՆ հիպատոս Զորջ Հորթոնի աշխատասիրութիւնները⁵, Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի⁶, Լոնդոնի Համալսարանի քինկզ քոլէջի ժամանակակից յոյների եւ Բիզանդիայի պատմութեան հետազօտող Լիսիմախոս Էօկոնոմոսի եւ Մերձատր Արեւելքի փախստականների հարցերով գործադիր քարտուղար Էդուարդ Հէյլ Բիէրսթադթի աշխատութիւնները⁷:

¹ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 8, թղթ. 162, ֆ. հ. 263:

² ՀԱԱում (ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 744) պահուող տեղեկագիրը կազմուել է Զմիռնիայի վերապրողների վկայութիւնների հիմամբ (20 Սեպտ. 1922-23 Սեպտեմբեր 1922):

³ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 748:

⁴ Դորա Սաքայեան, *Զմիռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերեանի օրագիրը*, Նահապետ, Երեւան, 2005:

⁵ George Horton, *The Blight of Asia. An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers, with the True Story of the Burning of Smyrna*, Indianapolis, The Bobbs-Merrill Company, 1926; George Horton, *Report on Turkey, USA Consular Documents*, Athens, Journalists' Union of the Athens Daily Newspaper, 1985:

⁶ Henry Morgenthau, *I Was Sent to Athens*, New York, Doubleday, Doran & Company, 1929:

⁷ Lysimachos Oeconomos, *The Tragedy of the Christian Near East*, Appendix: *The Smyrna Holocaust* by Rev. Charles Dobson, M.C., London, The Anglo-Hellenic

Առաջին աշխարհամարտի տարիներին Կ.Պոլսի եւ Զմիւռնիայի հայ ազգաբնակչութիւնը գերծ մնաց ամբողջական տեղահանութիւնից եւ հետեաբար բնաջնջումից⁸: Զմիւռնիայի հայ համայնքը մասնակի տեղահանութիւնների ենթարկուեց 1915-16ին, (երիտթուրքերն իրենց առաջին քայլերն սկսեցին Զմիւռնիայի շրջակայքի հայ ազգաբնակչութիւնից)⁹:

1915-16ի տեղահանութիւնները կազմակերպել եւ իրականացրել են Զմիւռնիայի նահանգապետ Ռահմի բէյը, ոստիկանապետ Ենիշեհիրլի Հիւմի Հիլլէն, Քուշադասի եւ Բերգամայի քաղաքապետերը են.: Բնակչութիւնը տեղահանուեց Աֆիոն-Կարահիսար, Կարաման, ապա Հալէպ, Ղէր Զոր¹⁰:

1922 Սեպտեմբերին Զմիւռնիայի քրիստոնէաբնակ թաղամասերի հայ եւ յոյն բնակչութեան բնաջնջումը, ապա քաղաքի հրկիզումը թուրքական իշխանութիւնների ցեղասպան քաղաքականութեան շարունակութիւնն էին¹¹: Ազգային քրիստոնէայ փոքրամասնութիւններին Թուրքիայից արտաքսելու թուրք պետական, քաղաքական եւ ռազմական գործիչ Մուստաֆա Քեմալի (1881-1938) քաղաքականութիւնը յանգում էր համընդհանուր թրքացմանը ոչ միայն էթնիկապէս, այլեւ «պատմականօրէն»¹²:

Ջարդարար պետութեան ծրագրերը մշակուած էին. հաշուարկուած դերաբաշխումը կատարուած էր հաշուենկատօրէն: Քեմալականներն ամէն ինչ իրականացրին գրեթէ անթերի, անշեղ եւ ճշգրիտ: Երբ Սեպտեմբերի 9ի առաւօտեան ժամը 11ին, թուրք հեծելազօրը մտաւ Զմիւռնիա, թուաց թէ արտառոց ոչինչ տեղի չի ունենալու: Սակայն առիթն անյապաղ ընձեռուեց: Այդ մասին Աթէնքի Նոր օրը գրում է. «Խիստ կարգապահութեամբ քարա-

League, 1923. նաեւ նոյն՝ *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, London, George Allen and Unwin, 1922. նաեւ՝ Edward Hale Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem*, N. Y., R. M. McBride & Company 1924:

⁸ Ալբերտ Խառատեան, «Կ.Պոլսի եւ Զմիւռնիայի հայ ազգաբնակչութեան տեղահանումների շուրջ (1915-1916 թթ.)», *Պատմաքաղաքական հանդէս* 2016:1, էջ 3:

⁹ Նոյն, էջ 10:

¹⁰ Ալբերտ Խառատեան, «Զմիւռնիայի հայ գաղթօջախը եղեռնի տարիներին», *Հայոց Մեծ եղեռն-90, յօդուածների ժողովածու*, ԵՊՀ, Երեւան, 2005, էջ 113:

¹¹ Մանրամասն տե՛ս՝ Թեհմինէ Մարտոյեան, «Զմիւռնիայի հայ եւ յոյն բնակչութեան բնաջնջման սպառնալիքի ժխտման հետեւանքները (1922 թ. Սեպտեմբեր)», *Հայագիտութեան հարցեր*, 2014:1(1), էջ 61-75. նաեւ՝ Tehmine Martoyan, "The Destruction of Smyrna in 1922: An Armenian and Greek Shared Tragedy," *Genocide in the Ottoman Empire, Armenians, Assyrians, and Greeks, 1913-1923*, ed. George N. Shirinian, New York, Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2017, էջ 227-49. նաեւ՝ Tehmine Martoyan, "Denying the Possibility of Annihilation during Genocide: A Case Study of the Armenians and Greeks, 1915-1922," *New Perspectives on the Genocide of the Greeks in the Ottoman Empire, 1913-1923*, ed. George N. Shirinian, Chicago, IL, Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2019, էջ 253-68:

¹² Յակոբ Յակոբեան, *Հայրենիք վերադառնալու գաղափարը եւ ժամանակակից միջազգային իրաւունքը*, Ասողիկ, Երեւան, 2000, էջ 114:

փէն անցան: Միայն Բասափորթին առջեւ, անծանօթ մը ռումբ նետեց, որմէ վիրատուեցաւ թուրք զինուորական մը ու կարծես այս դէպքը ազդանշան մը եղաւ սպանութիւններու, կողոպուտներու սկսելու»¹³: Ըստ Հորթնի:

Թուրքերի՝ Զմիտնիա մտնելուց անմիջապէս յետոյ կողոպուտը, յափշտակութիւնը, բռնաբարութիւնը եւ կոտորածն անելի մեծ թափ ստացան: Վրէժխնդրութիւնն ուղղուած էր գլխատրապէս հայերի դէմ. նրանց մեղադրում էին ռումբ օգտագործելու մէջ... Այնուհանդերձ, դա չէր արդարացնում երեք օր ու գիշեր տեւած՝ կանոնատր բանակի դասակի դաժան հաշուեյարդարը հայերի հետ... Թուրքամէտ ոչ մի քարոզչութիւն չի կարող թաքցնել այն, ինչն իրականում կատարուեց Զմիտնիայում, որովհետեւ վստահութեան արժանի շատ վկաներ կան, եւ ճշմարտութիւնը, անշուշտ, բացայայտուելու է¹⁴:

Քեմալը հայերի զանգուածային բնաջնջումը ժամանակին անուանել էր «խայտառակութիւն», իսկ *Minber* օրաթերթն այն նկատել էր «պատմութեան նկատմամբ կատարուած ամենամեծ եւ ամենաաններելի» գործողութիւն¹⁵: Այս բնորոշումները, ինչպէս Քեմալի հետեւեալ խոստումը, թէ՛ «կեանքն ու ունեցումըք պէտք է յարգուեն», փաստօրէն արգելք չհանդիսացան, որ Զմիտնիայի բնակչութիւնն անմիջապէս ենթարկուի կողոպուտի, բռնութեան եւ զանգուածային կոտորածի:

Սեպտեմբեր 10ի առաւօտեան Խաչերեանի գրառումից տեղեկանում ենք. ...Նաւահանգստում հանդարտութիւն է տիրում: Ուրախանում ենք, որ թուրքական գրաւումը տեղի ունեցաւ առանց արհեստականութեան: Սակայն պատշգամբից տեսնում ենք տասնհինգամեայ մի պատանու դիակ, որին միքանի հոգի մօտակայ փողոցից տեղափոխում են նաւամատոյցի պատի մօտ: Ճանապարհին հանդիպում ենք օտարահպատակ միքանի հայ երիտասարդների, որոնցից տեղեկանում ենք, որ թուրք զինուորը եւ խուժանը թալանել են Հայնոցը, առեւանգել կանանց ու աղջիկներին եւ պաշարել Սուրբ Ստեփանոս եկեղեցին ու Առաջնորդարանը¹⁶:

... Հայնոցն ու շրջակայ թաղերը դարձել են անմարդաբնակ, մինչդեռ ֆրանկների թաղի շուրջը գտնուող յոյն թաղերում երեւում են հատուկենտ անցորդներ: Հայնոցի վիճակը տեսնելուց յետոյ հասկացայ, որ թուրքը միշտ նոյն ջարդարար ու կողոպտիչ տարրն է, լինի Ալբանիայում, Մակեդոնիայում, թէ Թրակիայում, լինի Արաբիայում, Սիրիայում, թէ Հայաստանում: Թուրքը նոյն արինարբու գազանն է՝ անկախ այն բանից, թէ սքօղուած է իթթիհատական, թէ իթիլաֆական, համիդական, թէ քեմալական դիմակի տակ: Թուրքը նոյն գիշատիչ բորենին է՝ թէ՛ Փոքր Ասիայի ներքին գաւառների խորքերում, թէ՛ Պոլսի եւ Իզմիրի նման երոպականացուած քաղաքներում¹⁷:

¹³ «Զմիտնիայ կեանքը զինադադարէն յետոյ. ահաւոր փլուզումը», *Նոր օր*, Աթէնք, թիւ 3, 1924, էջ 29:

¹⁴ Horton, *Report*, էջ 20-21:

¹⁵ Մելինէ Անումեան, *Երիտթուրքերի 1919-1921 թթ. դադարաւարտութիւնների վաւերագրերը ըստ օսմանեան մամուլի*, մատենաշար 2, Էդիթ Պրինտ, Երեւան, 2011, էջ 34:

¹⁶ Սաքայեան, էջ 67:

¹⁷ Նոյն, էջ 69:

Պատմութեան դասախօս դոկտոր Էօկոնոմոսը նկարագրում է, թէ ինչպէս է հայկական թաղամաս ներխուժած թուրքական անկանոն բանակը դանակներով եւ սովիներով կոտորել բնակչութեանը¹⁸: Յիշարժան է նաեւ Դուրեան եպիսկոպոսի հետեւեալ հաղորդումը.

Սեպտեմբեր 9, Շաբաթ առտու, թուրքերու մէջ տարածուած ըլլալով քեմալական բանակին Իզմիրին շատ մօտ գտնուիլը, խաժամութ ամբոխը ոտքէն ցզլուիս զինուած իջաւ շուկայ. նոյն առտու շուկայէն անցնող կարգ մը քրիստոնեաներ գանակոծուեցան, վիրաւորուեցան, եւ ոմանք ալ խոշտանգումներու հետեւանօք մեռան: Սոյն օրը՝ ժամը 10էն սկսեալ, Իզմիրի այլեայլ կողմերէն քեմալական յառաջագնաց ջոկատներու ներս խուժելը աւելի խրախուսեց թուրք խուժանը, որ թրքական դրօշներով սկսաւ պտտիլ քաղաքին մէջ: Պատմախանէի հանդիպակաց պուլվարին վրայ հաւաքուած թուրք խուժանը սկսաւ հայոց թաղին ուղղութեամբ հրացան արձակել. այս հրացանածգութիւնը, որ քառորդ ժամ տեւեց, պատճառ եղաւ, որ հայոց թաղի մերագնեայք Ս. Ստեփանոս եկեղեցին ապաստանին... Ապաստանողներու մէջ 2000ի չափ մանուկներ կային¹⁹:

Յունական բանակի ներկայութիւնը պատրուակ էր. այն արագացրեց «մաքրագրեման» գործընթացի թափը, որն իրականացում էր ռազմական գործողութիւններին զուգընթաց եւ շատ անգամ՝ դրանցից անկախ²⁰: Հորթոնը այս առնչութեամբ հաղորդում է.

Թուրքերի՝ Զմիտնիա մտնելուց անմիջապէս յետոյ կողոպուտը, յափշտակութիւնը, բռնաբարութիւնը եւ կոտորածն աւելի մեծ թափ ստացան: Վրէժխնդրութիւնն ուղղուած էր գլխաւորապէս հայերի դէմ. նրանց մեղադրում էին ռումբ օգտագործելու մէջ... Այնուհանդերձ, դա չի արդարացնում կանոնաւոր բանակի դասակի երեք օր ու զիշեր տեւած դաժան հաշուեյարդարը հայերի հետ... Թուրքամէտ ոչ մի քարոզչութիւն չի կարող թաքցնել այն, ինչն իրականում կատարուեց Զմիտնիայում, որովհետեւ վստահութեան արժանի շատ վկաներ կան, եւ ճշմարտութիւնն անշուշտ բացայայտուելու է²¹:

Դուրեանը նախապէս որոշել էր իբրեւ հայ հոգեւորական ներկայանալ Զիտնիայի զինուորական կառավարչի պարտականութիւնները կատարող զօրավար Նուրեդին փաշային եւ գթութիւն աղերսել իր հօտի համար.

¹⁸ Oeconomos, *The Tragedy*, էջ 4:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 748:

²⁰ Եակովոս Ակցօղլու, *Անիծուած առիծի բնաջնջումը. մեր Անապոլիայի հելլէնականութեան մեթոդատրուած բնաջնջման գործընթացի իրար յաջորդող փուլերը*, Ճարտարագէտ, Երեւան, 2007, էջ 102:

Մինչեւ 1922 Սեպտեմբերի 18ը յունական բանակը դուրս էր եկել Փոքր Ասիայից: 1922 Հոկտեմբերի 11ին Մարմարայի ափին գտնուող Մուդանիա քաղաքում ստորագրուեց զինադադար Թուրքիայի եւ Անտանտի երկրների միջեւ, որին Հոկտեմբերի 13ին միացաւ Յունաստանը: Մուդանիայի զինադադարով, ապա Լոզանի պայմանագրով ասարտուեց յոյն-թուրքական պատերազմը (1922-1923):

²¹ Horton, *Report on Turkey*, էջ 20-21:

Առաջնորդարանին վրայ, թուրք խուժանին եւ անկանոն զինուորներու կողմէ եղած կատաղի յարձակումներն ու հրացանաձգութիւնները խորհիլ տուին ինծի, թէ Առաջնորդարանը թողլով ուրիշ տեղ մը ապաստանիլս եւ անկէ որեւէ միջոց գտնելով, Նուրէտտին փաշային ներկայանալովս, եւ ժողովուրդիս վրայ անոր գթութիւնը եւ բարեացակամութիւնը հայցելս անկի ճիշտ պիտի ըլլար... Հրաշքով դուրս նետուեցայ... Առաջնորդարանէն մինչեւ Այիա Ֆոթինիի երկարող Թաւերնէս կոչուած փողոցը, իւրաքանչիւր քայլափոխիս սպանուած քրիստոնէայ մը կը տեսնէի²²:

Այդ ճանապարհին նա տեսնում է թուրքական բանակին ողջունելու եկած թուրք բնակչութեանը եւ նկարագրում.

...1922 Սեպտեմբեր 9ի առաւօտեան ժամը ճիշտ 11ին, սարէն, ծորէն քով քովի եկած այլազան հագուստներով, երկու-երեք հարիւրի չափ թուրք չեթներ, Փունթայի կողմէն հանդիսաւոր կերպով մտան Իզմիրի քարափը: Թէեւ քանի մը մէթր անդին՝ ծովածոցին մէջ խարսխած քրիստոնէայ պետութիւններու տօնական օրերու յատուկ զարդարանքներով պճնուած զրահաւորները, «խոր քունի» մէջ ըլլալ կը թուէին... Բայց արթուն էր քաղաքին թուրք բնակչութիւնը, ու վաղ առաւօտէն խոնուած քարափին վրայ որոտընդոստ ծափերով ու բացականչութիւններով կը ողջունէին եկուոր «ճերմակ ձեռնցաւորները»²³:

Ամերիկեան *Asia* ամսագրի 1923 Փետրուարի յօդուածը նկարագրում էր տեղի ունեցած ողբերգութեան որոշ դրոագներ.

Սպանութիւնն ու կողոպուտը սկսուեցին Սեպտեմբերի 9ի երեկոյեան եւ շարունակուեցին՝ ապահովելով դաժանութեան համակարգուած ծաւալում մինչեւ տարաբախտ քաղաքի վերջնական կործանումը հրդեհից: Միայն Զուլան, Դիւման կամ Վիկտոր Հիւգօն կարող էին նկարագրել, թէ ինչ տեղի ունեցաւ... Ոչինչ չէր պակասում՝ ո՛չ կոտորածը, ո՛չ բռնաբարութիւնը, ո՛չ կրակը, ո՛չ կողոպուտը... Հայկական թաղամասը, խանութները, շուկաները կողոպտուել էին: Քաղաքում երեք օր ու գիշեր շարունակուած էին սպանութիւնները... Դիակները թափուած էին փողոցներում եւ նոյնիսկ գիւղեր տանող ճանապարհներին: Դիակներով բեռնուած վագոնները քշում էին հեռու, վագոնները տեղափոխում էին նաեւ կողոպտուած ապրանքը... Դռները ջարդում էին, կահոյքը՝ փողոց նետում, տղամարդիկ, կանայք ու երեխաները՝ սպանում²⁴:

Առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում Դուրեանի հետեւեալ գրառումը՝ Սեպտեմբերի 9ից շարունակուող ողբերգութեան մասին.

...Սեպտեմբերի 12ին՝ երեքշաբթի, Հայոց թաղի բոլոր տունները թալանուած եւ դատարկուած էին. այդ տուններէն մեծ մասին իւրաքանչիւրին մէջ 1-4 սպանուածներ կային. այս դժբախտներու կարգէն նախկին ատենապետ եւ մեծ օրէնսգէտ իրաւաբան, ազգային պ. Նազարէթ Ներսէսեան, որ թուրք շրջանակներու մէջ ալ մեծապէս յարգուած պատկառելի անձնատրութիւն մըն էր, իւր կնոջ եւ

²² Յղումն ըստ՝ Մինաս Տէր Սարգիսեան, *Իզմիրի անկումը եւ այլ էջեր*, տպ. Արագ, Պէյրութ, 1975, էջ 108:

²³ Նոյն, էջ 110-11:

²⁴ E. Grantham, "The Betrayal of Our Faith in the Near East," *Asia*, February 1923, էջ 120:

զաւակին հետ խուժդուժ խուժանին զոհերը կ'ըլլան... Թալանը նախ սկսած էր հայ վաճառատուններէն, որոնց մէջ էին 200.000-300.000 անգլիական ոսկիի արժէքով մանիֆայթուրա պարունակող Պաքըճեան, Սիրիսարեան, Իփիք-ձեան, Ազնաուրեան, Նիքոթեան, Գոճամանեան, Թօփալեան եւ այլ վաճառատուններ եւ հետզհետէ ծաւալեցաւ յոյն վաճառատուններու վրայ եւս ուր եւս պակաս չէին հսկայ դրամագլուխներ...²⁵:

Զմիւռնիայի հայերի ու յոյների բնաջնջումը Հորթոնն անուանում է «դանթական ողբերգութիւն» եւ, որպէս ականատես, արձանագրում համաշխարհային պատմութեան մէջ նմանօրինակ դէպքերի սակաւութիւնը.

Զմիւռնիայի վիլայէթի քրիստոնեայ բնակչութեան նկատմամբ կատաղի վերաբերմունք դրսեւորուել է ինչպէս Ա. համաշխարհային պատերազմի ընթացքում, այնպէս էլ մինչեւ պատերազմի սանձազերծումը... Թուրքերի արինոտ պատմութեան ընթացքում կատարուած ոչ մի գործողութիւն աւելի դաժան չի եղել, որքան Զմիւռնիայի 1922ի կործանումը. դա մարդկային տառապանքների համար ընտրուած վատթարագոյն ձեւերի կիրառումն էր անպաշտպան ու անզէն մարդկանց նկատմամբ... Դա սոսկալի ողբերգութեան «սատանայական աարտոն» էր²⁶:

ԶՄԻՒՆԻԱՆ ՏՐԿԻԶՈՒՄԸ

«Ո՛վ հրկիզեց Զմիւռնիան» հարցին պատասխանել են տարբեր ականատեսներ, ժամանակակիցներ, վերապրողներ ու նրանց սերունդները, ինչպէս նաեւ՝ ուսումնասիրողներ: Այս հարցի շուրջ տեսակէտերը կարելի է բաժանել երկու հակադիր խմբի.-

ա. Զմիւռնիան կանխամտածուած հրկիզել են թուրքերը:

բ. Զմիւռնիան հրկիզել են հայերն ու յոյները:

Տեսակէտ առաջին.- Ինչպէ՞ս թաքցնել յանցագործութեան հետքերը

Զմիւռնիայի հրդեհի մասին հաղորդումները բազմաթիւ են եւ տարաբնոյթ²⁷: Խիստ արժէքաւոր են ականատեսների եւ ժամանակակիցների վկայութիւնները: Առաջին տեսակէտը բազմաթիւ փաստերով հիմնատրուած է Հորթոնը ով անձամբ ներկայ է եղել ջարդերին ու աւերածութիւններին, կրակի օգնութեամբ թուրքերի առեւանգման, բռնաբարութիւնների, կողոպտման, սպանութիւնների եւ այլ յանցագործութիւնների ապացոյցների վերացմանը: Հորթոնը հաւաստում է, որ թուրք բնակչութիւնը, այդ թում՝ զինուորներ, մտնում էին հայկական թաղամաս՝ կոտորում բնակիչներին, կո-

²⁵ ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 748, էջ 4-7:

²⁶ Horton, *The Blight of Asia*, էջ 112:

²⁷ Rifat N. Bali, *The Saga of a Friendship, Asa Kent Jennings and the American friends of Turkey*, Libra, Istanbul, 2009. նաեւ՝ C. Hatzidimitriou, *American Accounts Documenting the Destruction of Smyrna by the Kemalist Turkish Forces, September 1922*, N.Y., Aristided Caratzas, 2005. նաեւ՝ G. Milton, *Paradise Lost, Smyrna 1922, The Destruction of Islam's City of Tolerance*, London, Samuel Simmons, 2008. նաեւ՝ H. Lowry, "Turkish History, On Whose Sources Will be Based? A Case Study on the Burning of Izmir," *the Journal of Ottoman Studies*, Istanbul, 1989:

ղոպտում նրանց ունեցուածքն ու աներում տները, ապա կրակի մատնում թիթեղեայ տուփերով նաթ կամ դիւրավառ այլ նիւթեր լցնում, թաթախում էին լաթերը նաթի մէջ ու պատուհաններից ներս գցում, փոքրիկ ռումբեր տեղադրում սալարկ քարերի տակ՝ պայթեցնելու նպատակով²⁸:

Թուրքերը հայկական թաղամասը կրակի մատնեցին 1922 Սեպտեմբերի 13ին: Վերջին յոյն զինուորները, ովքեր անցել էին Զմիւռնիայի միջով երեկոյեան ժամը 8ին, պատմում են, որ թուրքերը, շուրջ հինգ օր՝ նախքան հրդեհի բռնկումը, քաղաքում հաստատել էին իրենց ինքնիշխան տիրապետութիւնը, եւ այդ ամբողջ տեւողութեան հայկական թաղամասում սահմանել զինուորական վերահսկողութիւն մինչեւ համակարգուած եւ լիակատար իրականացուած արինահեղութեան աւարտը: Կենդանի մնացած հայերը թաքնուում էին նկուղներում՝ սարսափելով տեղաշարժուել, քանի որ ամբողջ քաղաքը ողորդուած էր զինուորներով եւ յատկապէս այն վայրերում, ուր սկսում էր կրակը: Հինգ օր շարունակ թուրքերը սպանում էին, կողոպտում եւ բռնաբարում: Կրակը բոցավառում էր հայկական թաղամասում): Թուրքական թաղամասն աղէտի չենթարկուեց եւ կրակից զերծ մնաց: Նողկալի բոլոր տեսարանների, քրիստոնեաներին բաժին հասած աննկարագրելի տառապանքների ընթացքում թուրքական թաղամասը ցնծում էր ուրախ պարերից, երգերից եւ բերկրալի տօնակատարութիւններից²⁹:

Զմիւռնիայի քաղաքապետարանի ջրցան մեքենաները, որոնք ջրի փոխարէն լցում էին բենզինով կամ նաթով, օգտագործում են հայկական թաղամասի արագ հրկիզման համար³⁰:

Հրդեհի մասին է վկայում է նաեւ վերապրող Բ. Ճամպազեանը.

Դպրոց ելայ ու դուրսը դիտեցի: Հրդեհ կար ամէն կողմ: Այն տունները, որոնք կրակ առած չէին, իտալացի զինուորներ տաք ջուր կու տային մեքենաներով: Թուրքերն ալ թաղերը պաշարած էին ու զէնքի տակ առած ո՛վ կը համարձակէր փախչելու: Հակառակ բոլոր տեսակ խստութիւններուն՝ մեզի միացողներուն թիւը կ'աւելնար, որոնք կը վկայէին, թէ իտալացիներուն սրսկածը պենզինախառն ջուր է, եւ այդ էր պատճառը, որ տունները իրարու ետեւէ կրակ կ'առնէին...:

... Եկեղեցւոյ մօտակայ թաղերը մեր պաշտպանութեան ներքեւ էր: Անոնք գիշերները կը մօտենային մեզի ու կը նետէին գերմանական սափիլը պոմպա, որոնք հեռուէն կը նետուէին, օդին մէջ վառելով՝ վար կ'իյնային ու մեծ վնասներ կը պատճառէին: Մեր ունեցած ռումբերը օգուտ չունէին: Եկեղեցւոյ բակին մէջ ինկած ռումբերը ո՛չ միայն մեծ վնասներու կ'ենթարկէին, այլեւ ժողովուրդը անշարժութեան, յուսահատութեան ու սովի կը մատնէին... Բոլորին ունեցածը գրաւուեցաւ... Երրորդ գիշեր ռումբ մը ջարդ ու փշուր ըրաւ Արսէն Չատուշը... Թո-

²⁸ Horton, *The Blight*, էջ 114-5:

²⁹ Նոյն:

³⁰ Ռընէ Պիօ, *Զմիւռնիայի վախճանը*, ՀՅԹԻ, Երեւան, 2001, էջ 22:

մարզացի քահանան ամէն կողմ էր, կը վազէր, ամէն ճիգ կը թափէր, որ տղաքը չտկարանային: Այս գործը ղեկավարելը մեր կարողութենէն վեր էր...³¹:

Ֆրանսիացի պատմաբան եւ լրագրող Ռընէ Պիւօն փաստում է, որ թուրքերը հայկական թաղամասը կողոպտելուց եւ բնակչութեան մեծամասնութեանը կոտորելուց յետոյ յանցագործութիւնների հետքերը վերացնելու նպատակով դիմել են կրակի օգնութեանը³²: Այդ է վկայում նաեւ *Daily News*-ի յատուկ թղթակից Ֆ. Մորիսը: Նա գրում է, որ երբ կրակը բռնկուել է հայկական թաղամասում, թուրք իշխանութիւնները ջանք չեն գործադրել այն կասեցնելու ... ակելին՝ բենզին են լցրել տների վրայ եւ հրկիզել ...³³:

Բժիշկ Օրան Ռաբէրը, ով ճանապարհորդում էր եւ այդ ժամանակ գտնւում էր Զմիւռնիայում, վկայում է, որ քաղաքը հրկիզել են թուրքերը³⁴:

Ամերիկացի ծովակալ, հրամանատար Աարոն Ս. Մերիլը, ով Ստամբուլ էր մեկնել ծովակալ Բրիստոլի հետ Զմիւռնիայի հիմնախնդրի լուծման շուրջ խորհրդակցելու, օրագրային իր գրառումներից մէկում նշում է.

Զմիւռնիայի հրկիզման պատասխանատուութիւնն ընկած է հենց թուրքերի վրայ. այն հաստատում է ականատեսների վկայութիւններով: Երբ կրակն արդէն տարածւում էր, շատերն են տեսել, թէ ինչպէս են թուրք զինուորները բենզին լցնում շինութիւնների շուրջը, նաեւ՝ ԱՄՆ հիպատոսարանի: Այդ մեղադրանքներին ի պատասխան՝ Անկարայի կառավարութիւնը յայտարարել է, որ առանձին կառոյցներ հրկիզելով՝ իրենք ցանկացել են կանխել կրակի յետագայ տարածումը...³⁵:

«United Press»-ը Կ.Պոլսի իր թղթակցից ստացել է հետեւեալ հեռագիրը. «Սիմփսոն» կործանարարը ժամանեց այս երեկոյ՝ բերելով Զմիւռնիայի հրդեհի ակելի շատ ականատեսների: Բոլորը համաձայն են, որ այն ծագել է հայկական թաղամասում...³⁶:

Հրդեհն անվնաս էր թողել թուրք եւ հրէական թաղամասերը. բռնկուել էին եւրոպական, յունական եւ հայկական թաղամասերը միայն: Շուրջ 4500 տուն եւ խանութ մոխրի վերածուեց հրդեհուած թաղամասերում: Հրդեհի պատասխանատուութեան մասին պաշտօնապէս յայտարարել է Զմիւռնիայում Ֆրանսիայի հիպատոսը, վկայելով՝ «թուրքերն էին, որ սկսեցին կրակը եւ կոտորեցին մեծ թուով քրիստոնեաների, թուրքերը, որոնց ... անուանում

³¹ Բիւզանդ. Ճամպազեան, *Պապանի կեանքի մը պատմութիւնը*, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Լիբանան, 1960, էջ 45:

³² Պիւօ, էջ 12:

³³ Նոյն, էջ 12-13:

³⁴ Ch. Papoutsy, *Ships of Mercy. The True Story of the Rescue of the Greeks, Smyrna, September 1922*, Portland, UNKNO, 2008, էջ 28:

³⁵ Геноцид армян, *Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий* (Հայոց ցեղասպանութիւնը, Թուրքիայի պատասխանատուութիւնը եւ համաշխարհային հանրութեան պարտաւորութիւնները), *հրք. 2, մաս. 2*, Գարդարիկի, Մոսկուա, 2005, էջ 79:

³⁶ Oeconomus, *The Martyrdom*, էջ 123-24:

ենք մեր ընկերները...»³⁷: Չմիտնիայում Բրիտանիայի հիւպատոսը եւս յայտարարել է, որ քաղաքի հրկիզումը կանխամտածուած դիտաւորութիւն էր³⁸:

Տեսակէպ երկրորդ.- Հրկիզել սեփական թաղամասե՛րը

Քեմալականներն ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ որդեգրել էին իրենց նախորդների քաղաքականութիւնը: Կառավարող շրջանակներն անհանդուրժող ու ջարդարար իրենց վարքագիծն «օրինականացրին» Լոզանում կնքուած պայմանագրով³⁹:

Լոզանի խորհրդաժողովի՝ 1922 Դեկտեմբերի 12ի ռազմատարածքային յանձնաժողովի ԺԳ. նիստի⁴⁰ արձանագրութեան մէջ գրուած է հետեւեալը.

... Թուրքերը երբեք չեն արհամարհել ոչ-մահմեդական տարրերի իրաւունքները, քանի դեռ վերջինները չեն չարաշահել այն երկրի մեծահոգութիւնը, որտեղ նրանք ազատ ու անկաշկանդ ապրել են դարերով: Մինչեւ հիմա կառավարութեան եւ թուրք ժողովրդի որեւէ գործողութիւնից զանգատուելու իրաւունք չունեցող հրեական համայնքի օրինակը բաւական կը լինէր ապացուցելու, որ յոյների եւ հայերի վերաբերմամբ տեղի ունեցած տհաճ իրադարձութիւնների մեղքն ամբողջութեամբ ընկնում է հենց նրանց վրայ⁴¹:

Լոզանի խորհրդաժողովին, թուրքական պատուիրակութեան պետ, քաղաքական գործիչ Իսմէթ Ինէժոնին հետեւեալ միտքը հնչեցնելիս հաւանաբար չի յիշում, որ Մարսելում յոյները վերաբնակիչներ էին.

Ինչպէս Մարսելում բնակութիւն հաստատած յոյները չեն կարող բանականօրէն երազել այնտեղ յունական անկախ պետութիւն ստեղծելու կամ այդ նաահանգիստն իրենց հայրենիքին միացնելու մասին, նոյնպէս եւ յոյներն ու հայերը չեն կարող Թուրքիային նման պահանջներ ներկայացնելու իրաւունք ունենալ⁴²:

Ինէժոնին պատասխանատուութիւնը բարդելով յոյների վրայ՝ հայերի նկատմամբ «անթաքույց գթասրտութիւն է դրսեւորում».

... Նա (յոյն պետական գործիչ Էլեֆթերիոս Վենիզելոսը - Թ.Մ.), անտարակոյս, աչքաթող է անում, որ Փոքր Ասիայի յունական օկուպացիան տարաբախտ հայերի համար դարձաւ տառապանքների ու աղէտների մի նոր աղբիւր: Այդ դժբախտ բնակչութեանը բռնութեամբ ներգրաւեցին յունական բանակի շարքերը... Յոյները, երբ հեռանում էին Ասիայից, հայերին տարան իրենց հետ: Ուստի պէտք է ասել, որ հայերի կրած տառապանքների անմիջական պատճառը հան-

³⁷ Oeconomus, *The Tragedy of the Christian Near East*, էջ 3:

³⁸ Նոյն:

³⁹ *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828-1923)*, խմբ.՝ Զ. Ս. Կիրակոսեան, Հայաստանի հրատ., Երեւան, 1972, էջ 779:

⁴⁰ Լոզանի խորհրդաժողովի ռազմատարածքային յանձնաժողովի տասներեքերորդ նիստին նախագահում էր Մեծն Բրիտանիայի պատուիրակութեան ղեկավար, արտաքին գործերի նախարար լորդ Քըրզըն օֆ Քեդլսթոնը:

⁴¹ *Հայաստանը միջազգային դիւանագիտութեան*, էջ 745:

⁴² Նոյն, էջ 746:

դիսացող կառավարութիւնը լոկ վերջին հերթին կարող է իրեն թոյլ տալ հրապարակօրէն կարեկցել նրանց...⁴³:

Չի ուշանում Լորդ Քըրզընի պատասխանը, որ 1922 Դեկտեմբերի 13ի նիստում անդրադառնում է Ինէօնիի յայտարարութիւններին.

... Իսմէթ փաշան, խօսելով հայերի մասին, նրանց ներկայացրեց որպէս թուրքական տիրապետութեան տակ ապրող միանգամայն երջանիկ ու գոհունակ մարդկանց, որոնք թուրքական կառավարութեան կողմից հանդիպում են ամենաեղբայրական զգացմունքների: Նրանց տառապանքների պատճառը, ըստ նրա խօսքերի, հանդիսանում են հենց իրենց սեփական խելագրկութիւնն ու նոր դրացիների մեքենայութիւնները: Եթէ երկու ժողովուրդների միջեւ միշտ գոյութիւն են ունեցել երջանիկ յարաբերութիւններ, ապա այդ ինչպէ՞ս պատահեց, որ Փոքր Ասիայում ապրող երեք միլիոն հայերի թիւը նուազելով հասել է 130,000ի: Արդե՞ք նրանք ինքնասպանութիւն են գործել, թէ՞ անհետացել են կամաւոր կերպով: Ի՞նչ ճշման տակ է տեղի ունեցել այդ նուազումը...⁴⁴:

1922 Հոկտեմբերի 25ին Փարիզից Յունաստանում Հայ Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչ Մ. Սվազլլին յղում է նամակում նշում է.

Իզմիրի աղէտը ամէնքս ալ տրտմութեամբ համակած է: Բաւական չէ մեր ֆիզիքական եւ նիւթական կորուստներուն մեզ առթած անասելի ցար, ու տակաւին պէտք է սրտաբեկ հանդիսատեսները ըլլանք, թէ ինչպէս ջանահնար կ'ըլլան աղէտքին պատասխանատուութիւնը հայոց վրայ ծանրացնել եւ վարկաբեկ ընել մեզ քաղաքակիրթ աշխարհին առջեւ: Այս անիրաւ մեղադրանքէն ազատելու համար պէտք է ձեռք բերել ճշմարտութիւնը...⁴⁵:

Փաստերն անաչառօրէն քննարկող մասնագէտների մեծ մասը շեշտում է որ մեղադրանքը հայերի ու յոյների նկատմամբ շինծու էր եւ կեղծ:

Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոյցի գործադիր քարտուղար Բիերսթադը պարզում է ճշմարտութիւնը տրամաբանութեամբ.

Ինչու՞ պէտք է յոյներն ու հայերն այրէին իրենց սեփական տները, որտեղ դեռ յոյս ունէին վերադառնալու: Իսկ թուրքերն ունէին այդ պատճառը: Նրանք ուզում էին ընդմիշտ թաքցնել թալանի, արիւնահեղութեան ողջ հետքը, որը տեւեց չորս օր շարունակ: Աւելին՝ նրանք որոշել էին, որ քրիստոնէութիւնը պէտք է ոչնչացուի Փոքր Ասիայի քրիստոնեայ մայրաքաղաքից, եւ դա պէտք է լինի կրակով ու սրով...⁴⁶:

Թէեւ շատերն էին սարսափազրու քաներ պատմում Չմիւռնիայում իրենց տեսածի մասին, այնուամէնայնիւ նրանք իրենց պարտքն էին համարում յիշեցնել. *«Բայց ի սէր Աստծու, իմ անունը մի՛ յիշատակէք, քանի որ ես Թուրքիա վերադառնալու յոյս ունեմ ...»*⁴⁷:

⁴³ Նոյն, էջ 747-8:

⁴⁴ Նոյն, էջ 750:

⁴⁵ ՀԱԱ, ֆոնդ 430, Ցուցակ 1, գործ 308, էջ 19-22:

⁴⁶ Bierstad, էջ 35:

⁴⁷ Grantham, էջ 121:

Նոյն առումով խիստ արժեքատու է Խաչերեանի օրագրային գրառումը. ... Հայերը, եթե նոյնիսկ այդպիսի դիտաւորութիւն ունենային, փոխանակ հրդեհը իրենց թաղից սկսելու, կարող էին հեյլէնական բանակի մեկնումից առաջ, եւ նոյնիսկ դրանից յետոյ, նախ թուրքական թաղերը կրակի տալ: ... թուրքերի գրաւումից քիչ յետոյ Հայնոցը մեծ մասամբ դատարկուած էր... այդ գիշերն իսկ թուրքերը Հայոց թաղում սկսել էին թալանը, սպանութիւններ ու ամէն տեսակի վայրագութիւններ: Իսկ մինչեւ Չորեքշաբթի՝ հրդեհի օրը, ոչ ոք չէր համարձակուած անցնել Հայոց թաղով, ուր մնաց թէ այն զանազան տեղերից հրդեհի տրուէր⁴⁸:

Գրական-հասարակական գործիչ, խմբագիր, վերապրող Միքայէլ Բարթիկեանի «Արնաշաղախ Իզմիրը» յուշագրութեան մէջ կարդում ենք.

... Թրքերը սակայն, պէտք ունէին քաւութեան նոխագի: Հարկատու էր յանցանքը թողնել ուրիշի վրայ: Եւ ո՞վ կարող էր լինել այդ, բացի հայից: Ուստի, թուրք թերթերը հրդեհի իբր դրոյիչ ու կազմակերպիչ ներկայացնում էին Թովմաս Բոյաջեանն ու Յակոբ Տերենցը: Ձերբակալման հրամանը տրուել էր այս երկու ազգայինների համար: Սրա նպատակն էր նաեւ սրել թուրք ժողովրդի հակահայ եւ ջարդարարական ախորժակը, արթնցնելու վրէժխնդրական զգացումները⁴⁹:

Հրդեհը մարելու յուսահատ փորձի մասին է Զմիւռնիայի հրէշների խմբից մի յոյնի հաղորդած հետեւեալ տեղեկութիւնը.

Երբ պատրաստուած էինք Էմնոսեան փողոցի եւ այլ տեղերի հրդեհները մարել, մեզ արգելուած էին զէնքով: Ջրի խողովակները յաճախ ջարդուած էին թուրքերի կողմից, այնպէս որ եթէ արգելքի էլ չհանդիպէինք, անկարելի էր լինում հանգցնել կրակը... Մի թուրք զինուոր մտնում էր որեւէ տուն, բաց էր անում մի փոքր տուփի կափարիչը, տուփի բովանդակած փոշին փչում էր տան մէջ, վառուած մի մօմ էր թողնում եւ դուրս գալիս: Հազիւ մի րոպէ յետոյ տան ամէն կողմերից, յանկարծական ահագին ժայթքումով դուրս էին երկարում բոցի թեւեր... զարմանում էինք, թէ ինչպէս ... շէնքը բռնկուած էր ամէն կողմից միանգամից: ... ուրիշ շատ տեղեր ձեռնաջրհաններով բենզին էին սրսկում եւ կրակ էին գցում⁵⁰:

Հրդեհի մարման նմանօրինակ փորձեր խաղաղ բնակչութեան կողմից եղել են, բայց ո՛չ թոյլատրուել են, ո՛չ էլ իրականացուել, քանի որ թուրքերը գործել են համակարգուած ձեւով եւ նախապէս ստացած հրահանգներով:

Ըստ Խաչերեանի՝ թուրքերը վաղուց էին որոշել ոչնչացնել Զմիւռնիայի քրիստոնեայ թաղերը: Իթթիհատականները մտադրութիւն ունէին ընդհանուր պատերազմի ընթացքում Պազոս լեռան վրայ գետեղուած թնդանօթներով քրիստոնեայ թաղերը քարոքանդ անելու, եթէ դաշնակից զրահատրները մտնէին Իզմիրի ծովախորշ: Այդ աւերիչ ծրագիրը չիրագործուեց, հետեւաբար քեմալականներն այն իրականացրին⁵¹:

⁴⁸ Սաքայեան, էջ 81:

⁴⁹ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 8, թղթ. 162, ֆ. հ. 263:

⁵⁰ Նոյն:

⁵¹ Սաքայեան, էջ 81-2:

Ուշագրաւ են Զմիւռնիայի թուրք ականատեսների ժառանգների յիշողութիւնները եւ կատարուածի մասին նրանց մօտ ձեւաւորուած գնահատականը: Թուրքիայի Կոնիա քաղաքի բնակիչ, ազգութեամբ թուրք, մասնագիտութեամբ ուսուցիչ երեսուներկուամեայ Սեալ Օզդեմիրը⁵² հետաքրքիր տեղեկութիւն է հաղորդում իր տատիկի պատմածից: Այս ողբերգութեան վերաբերեալ զանազան պատմութիւնների մասին տեղեկանալով եւ ծանօթանալով Թուրքիայի Հանրապետութեան պաշտօնական տեսակէտին, Սեալն այնտամէնայնիւ փորձում է յանգել ինքնուրոյն եզրակացութեան. «Ասում են... հայերն ու յոյներն են այրել քաղաքը: Չգիտեմ: Ասում են.. նրանք ցանկացել են այրել (ողջակիզել - Թ.Մ.) մահմեդականներին, մինչդեռ Ալլահը պատժել է նրանց, եւ իրենք են այրուել: Անկեղծ ասած միշտ մտածել եմ. **եթէ նրանք են հրկիզել քաղաքը, ապա ինչու՞ թուրքերի թաղամասը չեն հրկիզել, իրենք իրենց թաղամասն են հրկիզել** (ընդգծումը մերն է - Թ.Մ.): Արդեօ՞ք հնարատր է: Չեմ էլ պարկերացնում, թէ ինչու՞ եղաւ ընդհանրապէս: Բայց շատ հարցեր չեմ ուղղել այս թեմայի վերաբերեալ»⁵³:

Թուրքական կրթական համակարգում ընդգրկուած զրպարտանքը թէ հայերն են այրել Զմիւռնիան, ունենում է ժամանակաւոր արդիւնք, մանաւանդ այն թուրքերի վրայ, որոնք արտասահման անցնելով առերեսում են հակափաստերի այլ ճշմարտութեան. ուշագրաւ է, օրինակ, Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում գործող «Միութիւն ընդդէմ ցեղասպանութեան» կազմակերպութեան անդամ Սելայ Էրթեմի արտայայտութիւնը.

Թուրքական պաշտօնական պատմագրութեան համաձայն յոյներն են հրկիզել: Յետագայում տեղեկացանք, որ հենց թուրքերն են հրկիզել: Փաստօրէն, մեր իմացած պատմութիւնն անհիմն էր, կիսատ-պռատ, աղաաղուած: Նոր պատմութիւն պէտք է գրուի: Այս ռազմավարութիւնն աւանդոյթ կարելի է համարել: Սեփական նախաձեռնութեամբ սպանութիւններ իրականացնել, հրկիզել մի ամբողջ քաղաք, ապա՝ մեղքը բարդել ուրիշների վրայ⁵⁴:

Պատմաբան Վարդանեանն առաջին հերթին ընդգծում է քրիստոնեայ տարրի նախորոշուած բնաջնջումը Փոքր Ասիայում.

Զմիւռնիայի հրդեհը 1922 թ. Սեպտեմբերի 13-15ին, դրան հետեւած բնակչութեան բռնի տեղահանութիւնը եւ զանգուածային կոտորածներն իրենց պարզագոյն իմաստով քրիստոնէական տարրի ներկայութեան վերջն էին Փոքր Ասիայում: Քաղաքը, որն ամենամեծ քրիստոնէական կենտրոնն էր Փոքր Ասիայում, եւ որը յաճախ թուրքերի կողմից անուանում էր «գեաւուր Իզմիր» իր քրիստոնէական լինելու համար, կործանուեց⁵⁵:

⁵² Բնակչի անվտանգութիւնից ելնելով՝ փոխում է անուն ազգանունը:

⁵³ Հարցազրոյցն՝ ըստ թուրքագէտ Սոֆիա Յակոբեանի, էլեկտրոնային նամակ հեղինակին, 25 Մարտի, 2013:

⁵⁴ Էրթեմ, 23 Ապրիլի, 2013:

⁵⁵ Գ. Վարդանեան, *Յոյն բնակչութիւնն Օսմանեան Կայսրութիւնում եւ փոքրասիական աղէտը (1914-1923թթ)*, Կոլաժ, Երեւան, 2012, էջ 129:

Պատմաբան Ռիչարդ Յովհաննիսեանը հաստատում է կործանման դատապարտումը քաղաքի դառը հետեւանքները հայ բնակչության համար.

Երբ թուրքական բանակը ետ մղեց յունական ուժերը դէպի Եգէական ծով եւ 1922ին այրեց Զմիւռնիա քաղաքը, հայկական ներկայութիւնը Թուրքիայում, բացառութեամբ Ստամբուլի, փաստօրէն վերացաւ⁵⁶:

Ըստ Բիերսթադթի՝ Զմիւռնիայի արինահեղութեանը զոհ գնաց շուրջ 100,000 մարդ⁵⁷: Հորթօնը փաստում է, որ զոհերի ընդհանուր թիւը հասնում էր 100-120,000ի⁵⁸, միայն հրդեհը խլեց շուրջ 25,000 մարդու կէանք⁵⁹, նիւթական կորուստը ընդհանուր առմամբ 60,000,000 դոլար էր⁶⁰:

Երբ Զմիւռնիայի հրդեհի մասին լուրը տարածում է Կ.Պոլսում, թուրքական մամուլն այն բացայայտ անտարբերութեամբ է ընդունում: Քեմալականների համար Զմիւռնիայի երոպական բնակավայրերի հրկիզումը Թուրքիայի համընդհանուր թրջացման⁶¹ ծրագրի մասն էր կազմում: Կ. Պոլսից *Manchester Guardian*ին յղած մի հեռագրում պարզապէս նշում է, որ Զմիւռնիայի ողբերգութեանը յաջորդել է Քեմալի յայտարարութիւնը, թէ այնտեղ այլեւ չեն գործելու ամերիկեան քոլէջները, երիտասարդ մարդկանց քրիստոնէական միութիւնները (YMCA) եւ քրիստոնէական այլ հաստատութիւններ:

Զմիւռնիայի հայ եւ յոյն բնակչութեան բնաջնջման, ապա՝ քաղաքի հրկիզման ծրագիրը բաւականին սառնասրտօրէն էր մշակուած: Կատարուեց այն, ինչ մտածուած էր ի սկզբանէ: Հորթօնը վկայում է.

Մեծ հրդեհից յետոյ, որպէս դրա հետեւանք՝ քրիստոնեայ ամբողջ բնակչութիւնը բռնութեամբ քշուեց նաւահանգիստ, որտեղ մնաց միքանի օր: Քաղցից ու ծարաւից մեռնող մարդիկ օգնութիւն էին հայցում նաւահանգստում տեղակայուած ռազմանաւերից: Թուրքերի վարքը զգուելի էր: Միս Էմիլի Մակկալամը՝ Զմիւռն-

⁵⁶ R. Hovannisyan, *The Armenian Question, 1878-1923, A Crime of Silence - The Armenian Genocide Permanent Peoples' Tribunal*, London, 1985, էջ 27:

⁵⁷ Bierstadt, էջ 36: Թուրք հրապարակախօս, լրագրող Սայիդ Չեթինօղլուն խելամիտ է համարում Զմիւռնիայի զոհերի շուրջ 100,000ից աւելի լինելու հաշուարկը: Նա այդ փաստն արժանահաւատ է համարում՝ նշելով, որ հրդեհից առաջ Զմիւռնիայում շուրջ 400,000 քրիստոնեայ է ապրել, իսկ Հոկտեմբերի 1ի դրութեամբ առնուազն 190,000 քրիստոնեայի մասին տեղեկութիւն չի եղել (<http://hyetert.blogspot.com/2012/01/izmir-1922-hristiyan-hayat-o-gun-izmir.html>):

⁵⁸ Horton, *The Blight of Asia*, էջ 173-4:

⁵⁹ Տ. Տալոմօնիդէ, *Σμύρνης Χρυσόστομος* (Ս. Սոլոմոնիդիս, Խրիսոստոմոս Զմիւռնիացի), Աթէնք, Իրմոս, 1993, նաեւ՝ Լ. Պասաթիս, *Οι διωγμοί των Ελλήνων και η γενοκτονία στο Σμύρνη* (Լ. Խասիոտիս, Յոյների վտարումը եւ ցեղասպանութիւնը Զմիւռնիայում), Միկրասիա, 2006, էջ 61-64:

⁶⁰ Նոյն, էջ 66:

⁶¹ Մանրամասն տե՛ս՝ Հ. Սիմոնեան, *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանութիւնը եւ քաղաքականութիւնը*, Երեւան, Հայաստան, 1986. նաեւ՝ Ա. Սաֆարեան, *Գէօքալփը եւ «թիւրքականութեան հիմունքները»*, ԵՊՀ, Երեւան, 2012:

իայում կանանց գիմնագիայի տնօրէնը, այսօր առաւօտեան քաղաքից վերադառնալով, պատմեց, որ նաահանգստում եւ ծովափին դեռ նկատելի է առանց հացի ու ջրի նուաղող այդ խեղճ արարածների բազմութիւնը...⁶²:

Քեմալը Չմիտնիայում տեղի ունեցած ողբերգութիւնը որակեց իբրեւ «չհամաձայնեցուած միջադէպ», իսկ այլ խնդիրների համեմատութեամբ՝ «երկրորդական նշանակութեան դրուագ»⁶³: Երբ թուրք լրագրողները ժամանում են Չմիտնիա՝ տեսնում են հպարտօրէն ծածանող թուրքական դրօշը, Քեմալը ողջունում է նրանց եւ յայտարարում. «...**Մենք պարմութիւն ենք դարձել...**» (ընդգծումը մերն է - Թ.Մ.)⁶⁴:

Կ.Պոլսում ԱՄՆ դեսպան Մորգընթաւուն յետագայում գրում է.

Չմիտնիայի 1922ի կոտորածի, Փոքր Ասիայի յոյների մեծ գաղթի մանրամասները դեռ թարմ են հասարակութեան յիշողութեան մէջ: Ահա դրանցից միքանիսը. Քեմալի աչքի առջեւ թուրքական բանակն իրականացրեց Չմիտնիայի յունական թաղամասի յոյն տղամարդկանց, կանանց եւ երեխաների կանոնաւոր սպանութիւնը, տների եւ եկեղեցիների կազմակերպուած կողոպուտը, առանց խտրութեան՝ կանանց եւ երիտասարդ աղջիկների անկաշկանդ բռնաբարումը, 16-50 տարեկան աշխատաւոր տղամարդկանց օտարումը, ապա երկրի խորքերն արտաքսումը, ուր գրեթէ բոլորը մեռնում էին հարկադիր աշխատանքի հետեւանքով... Բոլոր այս բռնութիւնները Փոքր Ասիայից յոյներին ամբողջութեամբ արտաքսելով՝ թուրքերի նպատակադրուածութեան ակնյայտ դրսեւորումն են: Քեմալի հսկողութեան ներքոյ՝ թուրք ազգայնականների հետապնդած ծրագրով Փոքր Ասիան ամբողջութեամբ «թուրքացուեց»⁶⁵...:

Կատարուածը՝ զմիտնիաբնակ հայերի ու յոյների բնաջնջումը եւ քաղաքի քրիստոնէայ թաղամասերի հրկիզումը, Քեմալը ներկայացնում էր որպէս «արդար վրէժխնդրութիւն», եւ ոչ թէ պատահար.

Ազգի բարձրացումը նպաստող գործօնների թում է վրէժխնդրութեան զգացումը: Այն պէտք է ապրի իւրաքանչիւր ազգի հոգում: Դա հասարակ, սովորական վրէժխնդրութիւն չէ: Մեր վրէժխնդրութեան նպատակն է անվտանգ դարձնել

⁶² Horton, *Report on Turkey*, էջ 21:

⁶³ Lord Kinross, *Ataturk, The Rebirth of a Nation*, London, K. Rustem & Brother, 1964, էջ 326:

⁶⁴ Նոյն, էջ 327:

⁶⁵ H. Morgenthau, *I was sent to Athens*, էջ 47-49:

Քեմալականների՝ Փոքր Ասիայի թուրքացման քաղաքականութեանը հետեւողականօրէն հետամուտ լինելու իրողութիւնը հաաստել է անձամբ Քեմալը: Նկատի ունենալով հրկիզուող Չմիտնիան, նա դիմել է իր հայրենակիցներին՝ «*Երկար նայեցէք այս տեսարանին: Սա մեր երկրում օտար միջամտութեան վախճանն է: Այս կրակը դրա խորհրդանիշն է: Այն նշանակում է, որ մեր հայրենիքը վերջնականապէս ազաւորագրուել է դաւաճաններից եւ առեւտրականներից: Այսուհետեւ ազաւորագրուած ու մաքրագարդուած Թուրքիան կը պարկանի միայն եւ միայն թուրքերին*» (V. Poghosyan, «Avant-propos», *La Catastrophe de Smyrne de 1922 (Recueil de Documents)*, կազմ. եւ խմբ.՝ Վարուժան Պօղոսեան, ԵՊՀ, Երեւան, 2011, էջ 9:

ազգի թշնամիներին, նրա կեանքի, նրա ապագայի, նրա երջանկության թշնամիներին: Թող ամբողջ աշխարհին իմանայ, որ քանի դեռ մեր առջեւ կանգնած է նման թշնամի, նա մեր կողմից չի ներուի: Թշնամու հանդէպ գթասրտութիւնը թուլութեան եւ անզօրութեան վկայութիւն է: Դա մարդասիրութեան արտայայտութիւն չէ, այլ մարդկային զգացմունքների բթացման նշան:

...Միայն Զմիւռնիայի աղէտից յետոյ մեր ժողովուրդն իրօք արթնացաւ. նրան վերադարձաւ իր զգացմունքայնութիւնը, նա հասկացաւ, որ իրեն քարշ են տալիս անդունդ, եւ որոշեց իր սեփական ձեռքը վերցնել սեփական իրաւունքների պաշտպանութեան գործը: Բնական է, որ դրա համար անհրաժեշտ էր ուժեր ձեւաւորել⁶⁶:

1922 Սեպտեմբերի 15ին *Daily Telegraph*ի թղթակցին տուած հարցազրոյցում Քեմալը յայտարարում է.

Ինչպէս արդէն գիտէք, կոտորածներ կամ ինչ-որ նման բաներ Զմիւռնիայում տեղի չեն ունեցել: Իսկ կողոպուտն ու սպանութիւնները, որ պատահեցին, անխուսափելի էին: Երբ բանակը քաղաք մտաւ իրենց սեփական երկրից 450 կմ ռազմերթից յետոյ, քաղաքն այրուած ու թալանուած էր, իրենց ծնողներն ու հարազատները՝ կոտորուած. այդ ամէնը դժուար էր վերահսկել: Սակայն մենք կամենում էինք սահմանել վերահսկողութիւն: Այսօրուանից կարգուկանոնը լիովին վերականգնուել է: Մենք վրէժխնդիր չենք ուզում լինել: Մենք այստեղ չենք կարգաւորելու անցեալի հաշիւները: Մեզ համար անցեալի գործողութիւններն աւարտուած են⁶⁷:

Շահեկան է Մեծն Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջի՝ Զմիւռնիայում կատարուածի մասին 1922 Հոկտեմբերի 14ի մեկնաբանութիւնը.

... Ես չեմ պատրաստուում անդրադառնալ այն հարցին, թէ ով է պատասխանատու Զմիւռնիայի համար: Ես չեմ պատրաստուում քննարկելու այն հարցը, թէ արդեօք յոյներն են գրգռել թուրքերին, թէ թուրքերը՝ յոյներին: Ինձ համար բաւարար է ուշադրութիւն հրաւիրել այն փաստի վրայ, որ սկսած 1914ից թուրքերը, ըստ պաշտօնական վկայութիւնների, մէկուկէս միլիոն հայ տղամարդ, կին, երեխայ եւ հինգ հարիւր հազար յոյն են սառնասրտօրէն սպանել...⁶⁸:

Եւ կարծես եզրափակելով Զմիւռնիայում արուածը, Քեմալն իր 1923 Յունուարի 31ի ելոյթում ասել է.

Իզմիրի յարգելի՛ ժողովուրդ, իմ սիրելի՛ հայրենակիցներ, ինձ համար շատ մեծ երջանկութիւն է ձեր կողքին այսքան մօտ գտնուելն ու ձեզ ողջունելը: Ես երախտապարտ եմ այն անկեղծ զգացումների համար, որ ցուցաբերեցիք հինգ ամիս առաջ՝ իմ նախկին այցելութեան ժամանակ, մեր յաղթական բանակի ուղեկցութեամբ... Եթէ հնարաւոր լինէր, ապա ես իմ երախտապարտութիւնը կ'արտայայտէի Իզմիրի իւրաքանչիւր բնակչին առանձին... Իզմիրը մեր նախնիների հողն

⁶⁶ М. Кемаль, *Путь новой Турции 1919-1927, Подготовка Ангорский базы, 1919-1920*, (Մ. Քեմալ, Նոր Թուրքիայի ուղին 1919-1927թթ., Անգորայի բազայի պատրաստում, 1919-1920), *հղր.* 2, Պետիրատ, Մոսկուա, 1932, էջ 300-2:

⁶⁷ Oeconomos, *The Martyrdom of Smyrna*, էջ 64:

⁶⁸ Նոյն, էջ 134-35:

է... Ունենալով պատմական այդքան խոր արմատներ եւ գրաւելով աշխարհագրական այդքան կարեւոր դիրք՝ Իզմիրը տնտեսական եւ քաղաքական մեծ նշանակութիւն ունի մեզ համար: Հենց դրա համար էլ մեր թշնամիները, ցանկանալով ոչնչացնել Թուրքիան, առաջին հերթին իրենց հայեացքն ուղղեցին պատմականօրէն կարեւոր քաղաքին... Իզմիրի բռնազավթումը խոր վէրք հասցրեց ազգի հենց սրտին... Թանկարժէք Իզմիրը, իհարկէ, չպէտք է մնար թշնամու ձեռքերում եւ չմնաց...⁶⁹:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Զմիտնիայի հայերի եւ յոյների բնաջնջումը, քրիստոնէաբնակ թաղամասերի հրկիզումը Թուրքիայի համընդհանուր թրջացման ծրագրի մասն էր կազմում: Կանխամտածուած գործողութիւնները, որոնք աչքի էին ընկնում պարզունակ, սակայն ծայրայեղ անմարդկային մեթոդների կիրառմամբ, հետապնդում էին նաեւ հետեւեալ նպատակները.- հրդեհի միջոցով թաքցնել կատարուած յանցագործութեան հետքերը, ակերել մշակութային արժէք ներկայացնող հաստատութիւնները, կոթողները, քրիստոնէայ բնակչութեան բարձրարժէք մշակոյթը:

Զմիտնիայի հրկիզումն անհնարին դարձրեց սպանուածների թուի ճշգրտումը, սակայն յանցագործութեան հետքերը թաքցնելու կամ հնարատու ու անհնար մեթոդներով սպանուածների թիւը նուազեցնելու փորձերը ամէնեւին էլ չեն վերացնում կատարուած յանցագործութեան փաստը եւ կազմակերպիչներին չեն ազատում կատարուած յանցանքի համար պատասխանատուութիւնից: Քեմալականները Զմիտնիայի քրիստոնէաների նկատմամբ իրենց գործողութիւնների ծրագիրն իրականացրել են որոշակի յաջորդականութեամբ. սպանութիւն, կողոպուտ, առեւանգում, բռնաբարութիւն, ապա՝ հայկական եւ յունական թաղամասերի հրկիզում:

Մուստաֆա Քեմալի՝ նոր պետականութեան հիմքը դրուեց անմեղ ժողովուրդների արեան հեղմամբ եւ նրանցից զաւթուած ունեցուածքի սեփականացումով: Ինչպէս Օսմանեան Պետութիւնն էր ստեղծուել եւ դարերի ըն-

⁶⁹ Նոյն, էջ 261:

Թուրքիայի Հանրապետութեան՝ քրիստոնէաների նկատմամբ որդեգրած ցեղասպան քաղաքականութեան շարունակականութեան մասին է վկայում հետեւեալը: ԺԹ. դարում հիմնականում յոյներով, ապա՝ հայերով բնակեցուած Թաթաւա (Ստամբուլ) թաղամասում 1929ին խոշոր հրդեհ է բռնկուած, որի հետեւանքով կործանուած է շուրջ 230 շինութիւն: Տեղեկութիւնների համաձայն թաղամասը հրկիզուել է, իսկ հրդեհը երկար ժամանակ միտումնաւոր չեն մարել: Հրդեհի մասին համապատասխան մարմինների ժամանակին չտեղեկացնելու պատրուակով ձերբակալուել է *միքանի հայ եւ յոյն* (ընդգծումը մերն է - Թ.Մ.): Հրդեհի հետեւանքով քրիստոնէաները մարդկային եւ նիւթական կորուստ ունեցան, իսկ թաղամասն ստացաւ Քուրթուլուշ (թուրքերէն՝ փրկութիւն, ազատագրում) անուանումը (Ալին Օզինեան, «Թաթաւա-Քուրթուլուշ. Սամաթիայի դէպքերը դեռ չեն աւարտուել, 2013/09/02» <http://akunq.net/am/?p=33647>):

թացքում ամրապնդուել «արեամբ եւ հրով», նոր Թուրքիան եւս կերտում էր նոյն կերպ:

Փաստօրէն, մերժելով հայերի եւ յոյների բնաջնջման մասին որեւէ դիտարկութեան, նպատակի կամ ծրագրի գոյութիւն, «Զմիւռնիայի հրդեհ», «Զմիւռնիայի աղէտ» կամ նմանօրինակ բնորոշումները շրջանառուել են պատասխանատուութիւնից խուսափելու, արդարանալու նպատակով:

Զմիւռնիայում կատարուած ոճրագործութեան նիւթական կորուստը հայերի ու յոյների ցեղասպանութիւնների հատուցման անքակտելի մասն է կազմում⁷⁰: Ակնյայտ է, որ Զմիւռնիայում ոչնչացուեց քրիստոնէական մշակութային-կրթական մի ինքնատիպ ժառանգութիւն: Ստորել՝ յաւելուածում ներկայացնում ենք Զմիւռնիայի հրկիզման դատաւարութեան փաստաթուղթը:

ՋՈՒՄՀՈՒՐԻԷԹ ՕՐԱԹԵՐԹՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԱԾ ԶՄԻՒՆԻԱՅԻ ՀՐԴԵՀԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ (22 ՅՈՒԼԻՍ 1924)⁷¹

Զմիւռնիայի կառավարութիւնը 18 միլիոն ֆունտ ստերլինգ է պահանջել ապահովագրական ընկերութիւններից. անգլիական դատարանները որոշում են կայացրել յանձնաժողով ուղարկել Զմիւռնիա՝ հրդեհի եւ դրա պատճառների մասին տեղեկութիւնների եւ անկողմնակալ վկայութիւնների հաաքագրման նպատակով: Կառավարութեան (Թուրքիայի - Թ.Մ.) հասոյթը կազմում է 12 միլիոն ֆունտ ստերլինգ:

Զմիւռնիայի վերագրատումից եւ քաղաքի մեծ մասի աներումից յետոյ հրդեհի հետեանքով տուժածները ապահովագրական ընկերութիւններից պահանջում են 12 միլիոն ֆունտ ստերլինգի փոխհատուցում:

Ապահովագրական ընկերութիւնները հրաժարուել են վճարել պահանջուած փոխհատուցումը՝ հիմք ընդունելով այն փաստը, որ հրդեհը բռնկուել է պատերազմի ժամանակ, իսկ Զմիւռնիան հանդիսացել է պատերազմի դաշտ: Այս առնչութեամբ

⁷⁰ Յակոբ Տերենցը (Տէրյակորեան) (1871–1947), Զմիւռնիայում թուրքական իշխանութիւնների ոճրագործութեան վերաբերեալ Աթէնքում 26 էջանոց տեղեկագիր է պատրաստել, որի օրինակները ներկայացուել են Յունաստանի կառավարութեանը, Պօղոս Նոպարի Ազգային Պատուիրակութեանը, Ալեքսանդր Խատիսեանին: 1924 Նոյեմբերին Տերենցը եւ այլ վերապրողներ վերոյիշեալ տեղեկագրով ներկայացել են Լոնդոնում կայացած դատաւարութեանը («Ամերիկեան ծխախոտի ընկերութեան» Զմիւռնիայի մասնաճիւղն ընդդէմ «Գարդիան» ապահովագրական ընկերութեան): Նրանք դատարանի առաջ հաստատել են, որ Զմիւռնիան հրկիզել են թուրքերը (Սեդա Բուցիկանեան, Յակոբ Տէրենց, «Իզմիրի աղէտը եւ մեծ հրդեհին մանրամասնութիւնները», *Ազգ օրաթերթ (Երեւան) 8 Դեկտեմբեր, 2007*, https://www.azg.am/index_wap.php?nl=AM&id=2007120806&Base_PUB=0, մատչում 20 Յուլիս 2021:

⁷¹ Դատաւարութեան փաստթաթուղթը հայերէն թարգմանութեամբ ներկայացում է առաջին անգամ: Յաւելուածում պահպանուած է բնագրային տարբերակը՝ առանց հեղինակային միջամտութեան (*Ջումհուրիէթ*, 21 Յուլիս 1924):

կառավարութիւնը պահանջել է ապահովագրական ընկերութիւններից կամ վճարել փոխհատուցումը կամ դադարեցնել իրենց գործունէութիւնը Թուրքիայում:

Մեծ գումարներ վճարելու փոխարէն ապահովագրական ընկերութիւնները նախընտրում են փակել իրենց գրասենեակները եւ դադարեցնել գործունէութիւնը, սակայն հարցը դրանով չի լուծուում: Աւելին, հրդեհի հետեւանքով տուժած ապահովագրական ընկերութիւնները միաւորում են, իրաւաբաններ վարձում եւ դատական գործ յարուցում այն երկրների դատարաններում, որոնց պատկանում են այդ ընկերութիւնները:

Դատական գործընթացներ են սկսում ֆրանսիական, բրիտանական եւ զուիցերիական դատարաններում: Այն հաւասարապէս յուզում էր ե՛ւ ապահովադրերին ե՛ւ կառավարութեանը: Կառավարութիւնը փոխհատուցում է պահանջում հայ եւ յոյն տարագիրներին պատկանող, աւերուած շէնքերի երեք քառորդի համար, ինչը, որպէս լքեալ գոյք վերադարձուել է կառավարութեանը: Քանի որ հրդեհի հետեւանքով առաջացած վնասի մեծ մասը կրել է կառավարութիւնը, հետեւաբար լքեալ գոյքի յանձնաժողովի որոշմամբ կառավարութեանը տրամադրուող փոխհատուցման գումարը կազմում է 12 միլիոն ֆունտ ստերլինգ:

Երկու տարի առաջ դատական գործընթացներ են սկսուել միաժամանակ ֆրանսիական, բրիտանական, իտալական եւ զուիցերիական դատարաններում: Ապահովագրական ընկերութիւնների ղեկավարները յայտարարել են, որ հրդեհը բռնկուել է անսպասելիօրէն քաղաքի գրաւումից յետոյ եւ որ այն տարածուել է ապշեցուցիչ արագութեամբ: Նրանք համոզմունք են յայտնել նաեւ, որ քաղաքն այրել են յոյները, հայերը եւ թուրքերը Ջմիտնիայի գրաւումից յետոյ: Միա կողմի տեսակէտի համաձայն, որը տարածուել էր Եւրոպայում եւ Ամերիկայում, պատասխանատուութիւն կրում են թուրքերը. այնուամէնայնիւ, ճշմարտութիւնը կը բացայայտուի:

Երկու կողմերն էլ իրենց անմեղութիւնն ապացուցելու նպատակով՝ ներկայացնում էին տարբեր երկրներում հրատարակուած փաստաթղթային վկայութիւնների պաշտօնական զեկուցագրեր: Բրիտանական կառավարութեան հրատարակած պաշտօնական զեկուցագրում ամրագրուած էր, որ թուրքերն են պատասխանատու հրդեհի համար, մինչդեռ Միացեալ Նահանգների պետական Քարտուղարութեան պաշտօնական զեկուցագրերում մատնանշուած էր այն փաստը, որ թուրքերն այս գործում որեւէ դերակատարութիւն չեն ունեցել: Ֆրանսիական եւ իտալական կառավարութիւնների հրատարակած փաստաթղթերը վկայում են, որ ինչպէս թուրքերը, այնպէս էլ յոյներն ու հայերը պատասխանատուութիւն են կրում կատարուածի համար:

Առանց գործն ուսումնասիրելու՝ ֆրանսիական դատարանը որոշեց պաշտպանել ապահովագրական ընկերութիւններին՝ յայտարարելով, որ հրդեհը բռնկուել է պատերազմի դաշտում, եւ որ ապահովագրական ընկերութիւնները չեն կարող պատասխանատուութիւն կրել:

Բրիտանական դատարանը որոշում է կայացնում յանձնաժողով ուղարկել Ջմիտնիա՝ օտարազգի անկողմնակալ վկաներից տեղեկութիւններ հաւաքելու նպատակով: Յայտնի է, որ Ջմիտնիայում օտարազգիներն արդէն տեղեկացրել էին իրենց կառավարութիւններին, որ հրդեհը պատահաբար էր բռնկուել: Այն ընկերութիւնները, որոնք պատասխանատու էին հրդեհի համար, յոյսեր էին փայփայում, որ այս հետաքննութիւնը հնարաւորութիւն կը տայ շահելու դատը, եւ որ այն վերջնականապէս կը փակի Ջմիտնիայի հրդեհի հարցը:

Բրիտանական յանձնաժողովի որոշումը մեծ կարեւորութիւն ունի կառավարութեան համար: Դա մի հարց էր, որ մինչ այդ անտեսուել էր կառավարութեան կողմից, բայց յոյս կայ, որ կառավարութիւնն անմիջապէս գործ կը յարուցի ապահովագրական ընկերութիւնների դէմ՝ փորձելով վերստանալ վնասների հատուցման համար յարուցած հայցի դիմաց պահանջուող 12 միլիոն ֆունտ ստերլինգ հսկայական գումարը:

Կառավարութիւնն աւելի շատ ապացոյցներ ունի այս հարցի վերաբերեալ, քան անհատները, հետեաբար դատը շահելու հարցում առաւել նպաստատու դիրքում է գտնուում: Այն մեղքը, որ թշնամիները փորձում են վերագրել մեզ (կառավարութեանը - Թ.Մ.)՝ Զմիտնիայի հրդեհի պատասխանատուութեան հարցի առնչութեամբ՝ հաստատապէս կը վերանայ:

Վճիռ

Կայացուած Զմիտնիայի դատարանի կողմից հետեւեալ հարցի առնչութեամբ.

- | | |
|-----------------------------------|---|
| Հայցուոր՝ <i>Մեհմէդ Զամիլ բէյ</i> | ներկայացնում է «Մոսարէ, Հայիմ Գալանթի եւ Աշէր» ընկերութիւնը, Զմիտնիա: |
| Պատասխանող՝ <i>Մունիր բէյ</i> | ներկայացնում է «Ասիգուրասիոնի Գաներայի դի Տրիեստէ» ընկերութիւնը
Ընկերութեան Զմիտնիայի ճիւղի ղեկավար,
Հ. Լուան Ամադօ, Թխիկուր Հան,
Փենթեմալլիար, Զմիտնիա: |

«Մոսարէ, Գալանթի եւ Աշէր» ընկերութեան լիազօրուած գլխաւոր փաստաբանը յայտարարեց, որ իր յաճախորդներն ապահովագրել են իրենց երկաթեղէն պարունակող խանութները, որոնք գտնուում էին Փենթեմալլիար 158, Զմիտնիա հասցեում, 6 հազար ֆունտ ստերլինգ գումարի չափով «Ասիգուրասիոնի Գաներայի դի Տրիեստէ» ընկերութիւնում, եւ որ գոյքը ոչնչացուել է պատահաբար բռնկուած հրդեհի հետեանքով, բայց նշուած ընկերութեան Զմիտնիայի ճիւղի կառավարիչ պարոն Լուան Ամադօն հրաժարուում է վճարել փոխհատուցման գումարը եւ Զամիլ բէյը 3982 ֆունտ ստերլինգ հատուցում է պահանջել, 38 ֆունտ ստերլինգի տարբերութիւնը, որը կազմում է հրդեհից չվնասուած գոյքը:

Մունիր բէյը, ով ներկայացնում էր պատասխանող ընկերութեանը՝ յայտարարեց, որ՝

1. դատական գործն անորոշ է, քանի որ ոչնչացուած գոյքի իրական արժէքը հաստատապէս ապացուցուած չէ,
2. հրդեհի ժամանակ գոյքի առկայութեան հետ կապուած ապացոյցներ ներկայացնելու անհրաժեշտութիւն կայ,
3. դատարանին ներկայացրեց նաեւ հրապարակուած յօդուածաշարերից շուրջ 16 հատուած, որոնց համաձայն՝ հրդեհը բռնկուել է Զմիտնիայի վերագրաման հետեանքով ծագած ըմբոստութեան եւ անախորժութիւնների պատճառով: Բացի այդ, նա մատնանշեց Ստամբուլի Առետրային Երկրորդ դատարանի վճիռը, ըստ որի՝ ապահովագրական ընկերութիւնը պատասխանատուութիւն չի կրում ապահովագրութեան վճարման համար Պանդըրմայի դէպքում, որտեղ գոյքը ոչնչացուել էր նման հանգամանքներում հրդեհի հետեանքով,

4. Այն անձինք, ովքեր ծրագրել եւ իրականացրել էին հրդեհը, դատարանի որոշմամբ դատապարտուել են,

5. Իսմէթ փաշայի յայտարարութիւնները Լոզանի Խորհրդաժողովում ապացուցում են, որ յոյներն են պատասխանատու Զմիտնիայի հրդեհի համար:

Ներկայացնելով վերոբերեալ ապացոյցները՝ Մունիր բէյը համոզուած նշեց, որ իր կողմից ներկայացուող ընկերութիւնը ոչ մի կերպ պատասխանատուութիւն չի կրում կատարուածի հանդէպ եւ որեւէ պարտատրուածութիւն չունի:

Մեհմէդ Զամիլ բէյը, ներկայացնելով հայցուոր կողմը, փաստեր բերեց՝ յայտարարելով, որ հրդեհը պատահաբար է բռնկուել Զմիտնիայի պաշտպանութեան հետեանքով:

Դատարանը հայցուորի պահանջը քննելուց յետոյ վճռեց.

Պաշտպանական կողմի Ա. կէտի՝ պահպանուած ամբողջ գոյքից միայն հրդեհից չտուած 38 ֆունտ ստերլինգ արժողութեամբ գոյքի հարցի վերաբերեալ, դատարանը, հաշուի առնելով այն փաստը, որ կառոյցն ամբողջովին աներուել էր հրդեհի հետեանքով, հնարաւոր չէ որեւէ կերպ որոշել գոյքի ճշգրիտ քանակը: Հայցուորը պնդում է, որ հրդեհը պատահաբար է բռնկուել, եւ կառավարութեան կողմից իրականացուած պաշտօնական հետաքննութեան արդիւնքում այդ փաստը լիովին հաստատուել է: Այսպիսով, այլեւս որեւէ անորոշութիւն չկայ այս դատավճռում, քանի որ հրդեհի պատճառը պարզորոշ եւ հաստատապէս սահմանուած է:

Երկրորդ կէտով, որը վերաբերում է հրդեհի ժամանակ պահեստում պահուող գոյքի փաստացի գոյութեանը, դատարանն ընդունում է, որ գոյքը իրականում գոյութիւն է ունեցել՝ նկատի ունենալով, որ պատասխանողի կողմից հակառակ վարկածը չի հաստատուել:

Երրորդ կէտով՝ հաշուի առնելով ներկայացուած լրագրային ամենատարբեր յօդուածները, որոնք վերաբերում են որոշակի դաժանութիւններին՝ իրականացուած էսքիշեհիրում, Թուրգոլթուում, Սալիհիում, Ալաշեհիրում, Աֆիոնում, Գուրդոնում եւ Դումլոյում, Մուստաֆա Քեմալ փաշայի կողմից որոշակի նախազգուշական միջոցներ ձեռնարկելու նպատակով տրուած յանձնարարականները, ինչպէս նաեւ՝ բողոքարկումը Զմիտնիայի հետ կապ չունեցող որոշ գործողութիւնների դէմ դատարանը գտաւ, որ առնչութիւն չունեն այս դէպքի հետ եւ ոչ մի կերպ չեն կարող մեկնաբանուել պատասխանող ընկերութեան օգտին դատական այս գործընթացում:

Ինչ վերաբերում է պաշտպանութեան չորրորդ կէտին այն փաստի առնչութեամբ, որ որոշակի անձինք, ովքեր դատապարտուել են հրդեհը ծրագրելու եւ իրագործելու համար, եւ որ այդ հրդեհի պատճառը ապստամբութիւնն էր, որեւէ ապացոյց չի ներկայացուել այս յայտարարութիւնները հիմնաւորելու համար: Չնայած այն փաստին, որ որոշ անձինք պատժուել են, դեռ չի նշանակում, որ ապստամբութիւն է տեղի ունեցել, որն այլ կերպ ասած ամբոխի կողմից յեղաշրջում է կառավարութեան դէմ որոշակի նպատակով եւ ապացուցուած չէ, որ նման ապստամբութիւն կամ յեղաշրջում եղել է:

Հինգերորդ կէտով ներկայացուած փաստարկը, որը վերաբերում է Լոզանի Խորհրդաժողովում Իսմէթ փաշայի յայտարարութեանը, հիմնուած է լրագրերի յօդուածների վրայ եւ պաշտօնապէս չի հաստատուել: Եթէ նոյնիսկ ճանաչուէր, ապա այն ընդամէնը փաստարկ է բանակցութիւններ վարած հակառակորդ պատուիրակ Վենիզելոսի դէմ, եւ չի կարող օրինական հիմք հանդիսանալ դատարանների համար:

Այսպիսով, դատարանի որոշմամբ պատասխանողի կողմից հինգ կէտով ներկայացուած փաստարկները ընդունելի չեն եւ, հետեաբար, մերժուած են:

Ներկայացուած պայմանագրի համաձայն 5962 ֆունտ ստերլինգ պէտք է վճարուի (ընդհանուր ապահովագրութեան 6000 ֆունտ ստերլինգից հանելով 38 ֆունտ ստերլինգ) Լին Ամադոյի կողմից՝ որպէս դատական ծախսերով ապահովագրական ընկերութեան տեղական բաժնի կառավարիչ, համաձայն օրէնսգրքի 1567րդ յօդուածի: Բողոքարկումը բաւարարուած է համաձայն 150րդ յօդուածի:

Սեպտեմբեր 12, 1923

Զմիտնիա, Թուրքիա

Թարգման՝ Զեքի Բէյ

ԱՄՆի գլխաւոր հիպատոսութիւն,

Զմիտնիա, Թուրքիա

Ապահովագրական ընկերութիւնների ներկայացրած պահանջները. Զմիտնիայի աղէտը

Ֆրեդերիկ Օ. Բըդ

Փոխհիպատոս Ֆրեդերիկ Օ. Բըդ

Զմիտնիա, Թուրքիա: Պատրաստման ամսաթիւ *Յուլիս 24, 1924*

Նամակի ուղարկման ամսաթիւ *Յուլիս 25, 1924*

Որոշման համառօտ շարադրանք՝ ներկայացուած Զմիտնիայի Առեւտրային Դատարանի կողմից *Ջումհուրիէ* տեղ գտած լրագրային յօդուածի թարգմանութեան հետ, որը հրատարակուել է 1924 Յուլիսի 21ին Կ.Պոլսում եւ վերաբերում է Զմիտնիայի աղէտի հետեանքով կրած կորուստների փոխհատուցմանը. ընդամենը կցուած են եւ հնարաւոր է հետաքրքրական լինեն ամերիկեան ընկերութիւնների համար, որոնք նախկինում ապահովագրական գործունէութեամբ են զբաղուել այս շրջանում:

Դատարանը մօտ 160 նման հայց ունի օրակարգում, բայց շատ հաւանական է, որ նախորդը հաւանաբար կը կանխի գործընթացը շարունակելու անհրաժեշտութիւնը, եւ արդիւնքում կարող է յանգեցնել բարեկամական յարաբերութիւնների եզրափակման: Այնպիսի արդիւնաւէտ քայլեր, ինչպիսիք են իշխանութիւնների կողմից մերժումը այն ընկերութիւններին, որոնք հրաժարում են ընդունել այս պահանջները Թուրքիայում գործելու համար եւ իրենց ունեցուածքի բռնագրաւումը դատական գործընթացի միջոցով, արդէն ձեռնարկուած են եւ կարող են լրջօրէն երաշխաւորել վճարումների հարկադրում՝ համաձայն այս դատավճիռների:

Մինչ այս՝ գրասենեակը տեղեկացուեց ներկայացուցիչ Լոյժի կողմից (Անգլիա), որ աւերածութիւնը գնահատուած էր 50 միլիոն ֆունտ ստերլինգ, որից միայն 2-2,5 միլիոն ֆունտ ստերլինգն այնուամենայնիւ ըստ երեւոյթին վճարուել է համաձայն պատերազմի ռիսկային պայմանագրերի կէտերի, մինչդէռ 12-12,5 միլիոն ֆունտ ստերլինգ վճարուել է հրդեհի ապահովագրութիւնից: Հաստատուել է, որ այս իրաւապահանջներից ոչ մէկը չի բաւարարուել:

Չնայած ոչնչացուած կառոյցների թիւը ոչ-պաշտօնապէս սահմանուել է 35,000, աւելի հաւանական հաշուարկի համաձայն մասնաւորապէս ներկայացուցիչ Լոյժը միջինը գնահատում է աղէտի հետեանքով ոչնչացուած 18,000 կառոյց: Ըստ վերջին նախահաշուարկի, խանութները, բնակավայրերը եւ այլ հաստատութիւններ

համարում են որպես առանձին կառոյցներ՝ բացառութեամբ պաշտպանիչ պատերի, որոնք նորմալ հանգամանքներում դասակարգում են որպէս խմբային շինութիւններ: Վնասը բաժանում է 4166 ֆունտ ստերլինգի առանձին շինութիւնների համար՝ ներառեալ պարունակութիւնը:

Վերջին պահանջի բաւարարման խնդրով շատ հաւանական է յետագայ բարդացում տեղի ունենայ «Լքեալ գոյքի ունեցուածքի» առնչութեամբ, ինչպէս նշուած է լրագրային զեկոյցում, սակայն չկայ մի դէպք, որին առնչուել է այս գրասենեակը: Բրիտանական ընկերութեան ապահովադրի վերջին հայցում ծագումով հայ Թուրքիայի մի քաղաքացի, ում ունեցուածքը «Լքեալ սեփականութեան» օրէնքի նիւթ էր, եւ այն ապահովագրուած էր որպէս բնակավայր, յետագայում օգտագործուեց որպէս գրասենեակ եւ բնակատեղի: Վնասի փոխհատուցում տեղի չէր ունեցել, չնայած այն փաստին, որ ունեցուածքը ոչնչացուել էր Զմիտնիայի հրդեհից մի քանի ամիս յետոյ: Ընկերութիւնը հրաժարուել է վճարել փոխհատուցումը՝ պատճառաբանելով, որ անշարժ գոյքը սեփականութեան իրաւունքը հաստատող որեւէ փաստաթուղթ չի ունեցել ոչնչացման ժամանակ: Կառավարութիւնն ի վիճակի չի եղել կորզել այս գումարն ընկերութիւնից:

Քննարկման թեմայից զգուշութեամբ դուրս են մնացել շահոյթի, եկամտի եւ այլ հարցեր: Իշխանութիւնների հաւանական գործունէութիւնը եւ դիրքորոշումն այս առնչութեամբ կարող է լինել լոկ ենթադրութեան նիւթ:

Այն կարծիքն է տարածուած, որ ապահովագրական ընկերութիւնները վերջի-վերջոյ ստիպուած կը լինեն որեւէ կերպ համաձայնութեան գալ բոլոր պահանջատէրերի հետ՝ չկորցնելու համար ժամանակի եկամտաբեր գործը: Թուրքական իշխանութիւններն իրենց հերթին պատրաստակամօրէն հաշուի կ'առնեն ցանկացած առաջարկ, որ կարող են ներկայացնել հետաքրքրուած ընկերութիւնները:

THE ANNIHILATION OF THE ARMENIANS AND GREEKS IN SMYRNA AND THE ARSON IN THE CHRISTIAN QUARTERS OF SMYRNA (SEPTEMBER 1922)

(Summary)

TEHMINÉ MARTOYAN (tehminemartoyan@gmail.com)

The research focuses on the contradictory claims concerning the annihilation of the Armenians and Greeks in Smyrna and the arson in its Armenian and Greek quarters.

Based on collected data, information, eyewitness accounts and media reports, the paper rejects the Turkish claims that the arson was caused by Armenians and Greeks. It argues that these quarters were burnt in order to eliminate any evidence of killings and responsibility by the Turks. The author notes titles like “Fire of Smyrna” or the “Catastrophe of Smyrna” simply cover up the name of the perpetrators of the Smyrna atrocities.

The paper details the plan of action of the arson and massacre of the Christian population and notes that it had a specific order: killings, robbery, theft, rape, and finally arson. The author stresses that this procedure of violence was similar to many atrocities perpetrated against cities, towns and villages in the Armenian *Vilayets* and Cilicia.